

ԳԱՆՁԱՍԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԳՐԻԳՈՐ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼՅԱՆԻ
ՈՒՐԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ
(XVI դար)*

ԱՐՏԱԿ ՄԱՂԱԼՅԱՆ

Բանալի բառեր՝ Արցախ, Գանձասար, Գրիգոր Հասան-Ջալալյան, կաթողիկոս, Գավազանազիրք, Տիշատակարան, Սեֆյան Իրան, շահ Թահմասպ I, բունի հավատախոսություն, ճուլղական քաղաքականություն:

Նախաբան

Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի թիվ 2561 ձեռագիրը Մովսես Կաղանկատվացու «Պատմություն Աղուանից աշխարհի» երկի՝ 1664 թ. կատարված մի ընդօրինակություն է, որի վերջում XVIII դարում ավելացված Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսների Գավազանազրքում, կաթողիկոս Գրիգոր Հասան-Ջալալյանի մասին գրված է. «Տէր Գրիգորիս ուրացողն. Ռե (1556)»¹: Հարկ է նկատել, որ 1556-ը ոչ թե ուրացություն, այլ, ինչպես կտեսնենք ստորև, Գրիգորի՝ կաթողիկոս դառնալու մոտավոր թվականն է:

Գրիգոր կաթողիկոսի կրոնափոխության մասին տեղեկություն կա նաև Սիմեոն Երևանցու «Ջամբու»²: Իսկ եկեղեցական գործիչ, մատենագետ ու բանասեր Հովհաննես Եպիսկոպոս Շահխաթունյանցն իր կազմած «Շարակարգութիւն կաթողիկոսացն Աղուանից» ցանկում գրում է. «Հթ (79). Տէր Գրիգոր Գ, յիշատակի սա ի յիշատակարանի Յայմաւուրի միոյ գրելոյ ի թուին Ռե (1559): Իսկ յամի 1573 ուրանայ զհաւատ իւր»³:

Հայտնի հնագետ ու բանահավաք Խաչիկ Ժ. վարդապետ Դադյանի արտագրած «Կարգ կաթողիկոսացն Աղուանից» մի թերի ցանկում այդ տեղեկությունը ներկայացված է այսպես. «Տէր Գրիգոր որդի Մեյրաբեկին, տեսուն

* Ներկայացվել է 08. XII. 2023 թ., գրախոսվել է 27. XII. 2023 թ., ընդունվել է տպագրության 22. III. 2024 թ.:

¹ Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետ՝ ՄՄ), ձեռ. № 2561, թ. 262բ: Տե՛ս նաև՝ Մ ա ղ ա լ յ ա ն. 2008, 270:

² Երևանցի. 2022, 121:

³ Շ ա հ խ ա թ ու ն ե ա ն ց. 1842, 344: Այս կաթողիկոսաշարի՝ Խ. վրդ. Դադյանի կատարած ընդօրինակությունը տե՛ս Հայաստանի ազգային արխիվ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆ. 319, ց. 1, գ. 80, թ. 21 բ:

Խաչենոյ. Ռե (1556) թուին և սա ուրացաւ զՔրիստոս»⁴: Այստեղից իմանում ենք, որ Գրիգոր կաթողիկոսը եղել է Խաչենի իշխան Մեհրաբ բեկ Հասան-Ջալալյանի որդին: ՄՄ-ում պահվում է նաև Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսների անվանացանկի՝ Խ. վրդ. Դադեյանի ձեռքով 1889 թ. փետրվարի 25-ին կատարված ընդօրինակությունը, որտեղ ևս առկա է նույն տեղեկությունը⁵:

Դժվար չէ նկատել, որ ինչպես Սիմեոն Երևանցու «Ջամբուր», այնպես էլ Հ. եպս. Շահխաթունյանցի և Խ. վրդ. Դադեյանի ընդօրինակած ցանկերն իրենց հաղորդած տեղեկություններով հանգում են Գանձասարի կաթողիկոսների Գավազանագրքին:

Սակայն առկա է խնդրո առարկա հարցի լուսաբանմանը նվիրված մեկ այլ ինքնուրույն սկզբնաղբյուր, որն ունի առանցքային նշանակություն Գրիգոր կաթողիկոսի ուրացության հարցի պարզաբանման գործում: Դա Փարաջանց գյուղում 1574 թ. ընդօրինակված Ավետարանն է, որն այժմ պահվում է Նոր Զուղայի Ս. Ամենափրկիչ վանքի մատենադարանում: Ավետարանի գրիչ Աբրահամ արեղայի թողած հիշատակարանում կարդում ենք. «Անուամբն Աստուծոյ սկսայ Սուրբ Աւետարանս եւ աջողմամբն կատարեցի ի դուռս Սուրբ Աստուածածնին եկեղեցուս, ի գեղըս, որ կոչի Փարաջանց, ի երկիրս Հաքարու, ի ոտս Դիզայփայտու, ի թվին ՌԻԳ (1574): Գրեցաւ ձեռամբ սուտանուն կրանաւոր Աբրահամ արեղի, ի կաթողիկոսութեան տանս Աղվանից Տէր Գրիգորիսի, որ երես թահեայմազ փաթջահ էրես անկամայ տաջկացուց, մեզ մեծ սուք եղաւ անմխիթար»⁶:

Այստեղից ակնհայտ է դառնում, որ Գանձասարի Գրիգոր կաթողիկոսը բռնություն մահմեդականացվել է Սեֆյան շահ Թահմասպ I-ի (1524–1576) կողմից: Տվյալ դեպքում «տաճկացում» ասելով միանշանակ պետք է հասկանալ մահմեդականության երկու ճյուղից մեկի՝ շիիզմի ընդունումը, որը Սեֆյան Իրանում հռչակված էր որպես պետական կրոն և պաշտոնական գաղափարախոսություն⁷:

⁴ Թ օ փ ճ ե ա ն. 1898, 89:

⁵ ՄՄ, Կաթողիկոսական դիվան (այսուհետ՝ ԿԴ), թղթ. 240, վավ. 132, թ. 3:

⁶ Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի. 1970, 127: Հոդվածը հրատարակության պատրաստելիս նորջողայեցի բանասեր Նիկիտ Միրզայանցի միջոցով ստացանք նաև այս հիշատակարանի լուսապատճենը. Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի մատենադարան, ձեռ. № 33, թ. 261ա–բ:

⁷ Петрушевский. 1966, 373–374.

261

յս և ասեց յնա. կինդ
 ու ասրեն. ող որ գեղ
 քան ասց արտու եաց:
Եւասէ յս ող սոր:
Եւասէ յս և ողես
 դատ ասց արտու եմ
 քեզ. երթացս ւն հետ
 է. մի մեղ անց էր:
Լեւոսար ան ըստ:
Յող հանում:
Յող հանու էս որև
 որդի որ ոտ մանգլե
 թինն որ ոտ ալ ուլ. պ
 ասրմեաց մեղ. ասց կն
 իծգ. ամի. համբատ
 ն ալ ց փրկեց ին. գր
 եաց զաւ ետ արանս
 էր յի էս ոս քաղաք
 ի ինտոր ց եղեց յն.
 աս իայ. յուն ակ ան.
 Բարբատ ուլ. և հզ
 ուի մի. վնառ թի
 լե. տունս. ուլ. և
 աս ետ արանս գլխաւ

որս ծե. միայն գամ
 էս. չորեքեան. աս. զս.
 գլուխ ու ճիւղ. վկա
 ու թիւք. հիւ տունք.
 փայ:
Լրդ ող սե հարք
և էգբ արք իմ էքս
 Վն ու ամբն այսնս
 այ. սե աս ետ արանս.
 և ալ ող մամբն. կա
 արարեցի. ի դուռ սսե
 ամ ամն ին. եկեղեցուս
 ի գեղ ըս որ կոչ ի փար
 աջանց ի երկ իրս հար
 ար ու ի ոտս դեղաց փ
 այտ ու. ի թմն. ու ի դ:
 Գրեցաւ ձեռ ամբ
 խուս ան ուն կրանն
 որ ար ի համաբեղ ի:
 ի կննոս ու թե արանս
 աղ վան ից սոր գիրդ
 որ իս ի որ երեո ըսս հ
 եայ մազ փաթ ըսն.
 Եր էտ ան կամայ տաջեաց
 ուց.

Աբրահամ արեղայի թողած հիշատակարանը՝ շահ Թահմասալի կողմից
 Գանձասարի Գրիգոր կաթողիկոսին բռնությամբ
 մահմեդականացնելու մասին:

Աղբյուրագիտական տեղեկություններ Գանձասարի Գրիգոր կաթողիկոսի մասին

ՄՄ-ի Կաթողիկոսական դիվանի արաբատառ վավերագրերի ֆոնդում պահվում է շահ Թահմասպ I-ի՝ 1570 թ. ապրիլի 19-ի հրովարտակը Գանձասարի Գրիգոր կաթողիկոսի իրավունքները վերահաստատելու մասին: Սեֆյան փաստաթղթաչըջանառություն մեջ տարածված սկզբունքի համաձայն՝ շահական հրովարտակներում ամբողջությամբ կամ համառոտ բերվում էր նախկինում նույն հարցի առնչությամբ տրված վավերագրերի բովանդակությունը: Եվ, ահա, չնորհիվ այդ սկզբունքի՝ տեղեկանում ենք, որ «համաձայն նորին սրբություն, Ջամ[չիդ]ի փառքն ունեցող, դրախտաբնակ արքայի (շահ Իսմայիլ I – Ա. Մ.) վճռի և հրովարտակի Խաչենի և Բարդայի, Աղվանքի բոլոր մահալների ու վայրերի առաջնորդությունն ու գլխավորությունը հանձնված էր Արիստակես կաթողիկոսին և որովհետև վերջինս վախճանվել էր, [այդ պաշտոնը] մենք հանձնել էինք նրա եղբոր որդուն՝ Սարգսին: Այն բանից հետո, երբ սա ևս վախճանվեց Մեհրաբ բեկի որդի Գրիգոր կաթողիկոսը, որ Սարգսի եղբոր որդին էր, եկավ աշխարհի ապավենի դուռը և խնդրեց Սարգսի տեղը [տալ իրեն]: 962 թ. շաբան ամսին (1555 թ. հունիս 21–հուլիս 20) վերոհիշյալ մահալների ու վայրերի առաջնորդությունն ու գլխավորությունը հանձնեցինք նրան»⁸: Այստեղից ակնհայտ է դառնում՝ Գրիգոր կաթողիկոսի իրավունքները նախապես հաստատված են եղել 1555 թ. ամռանը՝ կրկին շահ Թահմասպ I-ի հրովարտակով, և, որ նա հաջորդել է իր հորեղբայր Սարգիս Հասան-Ջալալյանին⁹:

Հայտնի է նաև Սարգիս կաթողիկոսի մահվան ստույգ օրը: Ջրաբերդի Երիցմանկանց վանքում գրված մի Ավետարանի հիշատակարանում կարդում ենք. «Թուխ ՌԴ (1555), նկարեցաւ և կազմեցաւ Աւետարանս ի նոր գիւղի Ճալալեցոց, և յայս ամի Սարգիս կաթողիկոսն փոխեցաւ ի Քրիստոս ի մեհեկի ԺԹ (19), աւուրն ԲՇ (երկուշաբթի – Ա. Մ.)»¹⁰, որը շարժական տոմարով համապատասխանել է մայիսի 27-ին: Կաթողիկոսի մահից հետո նրա եղբոր որդի Գրիգորը Գանձասարի աթոռից ճանապարհվել է «աշխարհի ապավենի դուռը»՝ Ղազվին, ուր 1548 թ. շահ Թահմասպ I-ը Թավրիզից տեղափոխել էր Սեֆյան պետության մայրաքաղաքը¹¹, և այնտեղից էլ 1555 թ. վերադարձել իր կաթողիկոսական իրավունքները հաստատող շահական հրովարտակով:

Այնուհետև, ինչպես տեղեկանում ենք նույն փաստաթղթից, շահին է ներկայանում Ամիրի որդի ոմն Մաղաբիա և «վերոհիշյալ մահալների ու վայրերի առաջնորդության ու գլխավորության հրամանագիրը իր անունով դարձնում»¹²: Հարկ է նկատել, որ Մաղաբիայի անունը բացակայում է Գան-

⁸ Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ. 1956, 65: Այս փաստաթղթի ուղևորներն պատճենը տե՛ս ՄՄ, ԿԴ, թղթ. 241, վավ. 199:

⁹ Գանձասարի Սարգիս կաթողիկոսի մասին տե՛ս Ուլուբաբյան. 1975, 354–355:

¹⁰ Մմբատեանց. 1904, 146, Ուլուբաբյան. 1975, 355:

¹¹ История Ирана. 1977, 177.

¹² Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ. 1956, 65:

ձասարի կաթողիկոսների Գավազանագրքում¹³: Հավանաբար, նա, որպես Գրիգորի հակաթոռ կաթողիկոս, պաշտոնավարել է 1560-ական թվականների կեսերից մինչև 1570 թ.:

Դրանից հետո՝ 1570 թ. ապրիլին, կրկին շահական արքունիք է մեկնում Գրիգոր Հասան-Ջալալյանը, որին հաջողվում է վերահաստատել իր կաթողիկոսական իրավունքները: «Ներկայումս վերոհիշյալ Գրիգորը եկավ բարձրագույն դուռը, — կարգում ենք շահ Թահմասալի հրովարտակում, — և խնդրարկու եղավ այն մասին, որ սկսած հին ժամանակներից մինչև այժմ այդ վայրերի ու մահալների առաջնորդությունն ու գլխավորությունը նրա պապերին ու նախնիներին է պատկանել և ցույց տվեց նախկին թագավորների կողմից այս առթիվ հրապարակված հրամանագիրը: Դրա համար էլ նախկին կարգով հիշյալ վայրերի ու մահալների առաջնորդությունն ու գլխավորությունը հանձնեցինք վերոհիշյալ Գրիգոր կաթողիկոսին»¹⁴: Կասկածից վեր է, որ վերջինիս ձեռքին է եղել Սեֆյան շահ Իսմայիլ I-ի (1502–1524) կողմից Գանձասարի Արիստակես կաթողիկոսին տրված հրովարտակը, որի մասին հիշատակվում է փաստաթղթում, քանի որ 1570 թ. դրությամբ այդ արքայատոհմի միակ «դրախտաբնակ» շահը նա էր:

Հայտնի արևելագետ Հակոբ Փափագյանը նշում է, որ այդ հրովարտակը «հրապարակված պետք է լիներ 1516 թվականին»¹⁵: Թեև հետազոտողը չի հստակեցնում. ամենայն հավանականությամբ, նա հիմնվում է Գանձասարի կաթողիկոսների Գավազանագրքի սույն հաղորդման վրա. «Տէր Արստակէս. ՋԿՆ (1516)»¹⁶: Սակայն, պետք է նկատել, որ Հ. Փափագյանի ենթադրությունը չի հաստատվում: ՄՄ-ում պահվում է 1511 թ. մի Ավետարան, որի գրիչ Հովհաննեսի թողած հիշատակարանում կարդում ենք. «Գրեցի մերձ առ գեղաբաղաբիս Սոթայ ընդ հովանեաւ սուրբ Մաշտոցիս և այլ ամենայն սուրբ եկեղեցեաւ, ի հայրապետութեան տեսոն Ըռատակիսի, ի յաթոռն սուրբ Գանձասարայ, ի թագաւորութեան թախտիս Դայավրեծոյ սուլտան Շահ Իսմայելայ, որ է թագաւոր խաղաղարար, ի թիվականիս հայկազ[ե]ան սեռի ՋԿ (1511) և հոռոմոց ապրիլ ԻԹ (29), հայոց արաց Ժէ (17)»¹⁷: Այսպիսով, Արիստակեսը, որպես Գանձասարի կաթողիկոս, հիշվում է դեռևս 1511 թ.: Հետևաբար, նրա իրավունքները հաստատող հրովարտակը պետք է որ հրապարակված լինի 1511 թ. ոչ ուշ: Արիստակես կաթողիկոսի շահ Իսմայիլ I-ից ստացած հրովարտակը կամ չի պահպանվել, կամ էլ մնացել է Բարձրագույն դիվանում՝ շահ Թահմասալ I-ի կողմից Գրիգոր կաթողիկոսի իրավունքները վերահաստատող նոր ֆերմանի պատրաստման ընթացքում:

Գրիգորի իրավունքների վերահաստատման առթիվ 1570 թ. տրված շահական հրովարտակում խիստ կարգադրություն կա նաև նրա հակաթոռ կաթողիկոսին. «Վերոհիշյալ Մաղաբիան թող այսպես որոշված ճանաչի և այսուհետև երբեք ոչ մի դեպքում այդ վայրերի ու մահալների առաջնորդության ու գլխավորության [գործերում] չմիջամտի և իրեն կաթողիկոսություն

¹³ ՄՄ, ձեռ. № 2561, թ. 262բ, Մ ա ղ ա լ յ ա ն. 2008, 270:

¹⁴ Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ. 1956, 65–66:

¹⁵ Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ. 1956, 95:

¹⁶ ՄՄ, ձեռ. № 2561, թ. 262բ, Մ ա ղ ա լ յ ա ն. 2008, 270:

¹⁷ ՄՄ, ձեռ. № 10157, թ. 295բ:

նրից հրաժարեցված համարի և ինչ որ ապօրինի կերպով այդ մահալից վերցրել է, ստուգելուց հետո, ետ վերադարձնի»¹⁸:

ՄՄ-ում պահվում է Սեֆյան շահ Աբբաս I-ի (1587–1629) 1607 թ. հրովարտակր Գանձասարի վանքի վանականներից գանձվող թաֆավութ-ե ջիգյախի¹⁹ մասին: Ճերմանից պարզվում է, որ տեղի թիուղարը «վանքի վարդապետից և վանահորից պահանջում է նաև այն գումարը, որ նորին սրբությունը դրախտաբնակ արքայի (շահ Թահմասպ I – Ա. Մ.) ժամանակ Մաղաքիա անունով մեկը հանձն էր առել [վճարել] կաթողիկոսական աթոռի համար»²⁰: Այս տեղեկության հիման վրա Հ. Փափագյանն եկել է այն եզրակացություն, որ այդ իրավունքը ձեռք բերելու համար Մաղաքիան հանձն էր առել ամեն տարի որոշ գումար վճարել արքունի գանձարանին, և հիշյալ գումարը գրանցված է եղել հարկային մատյաններում՝ որպես պարբերաբար հատուցվող հարկային պարտավորություն²¹:

Կասկածից վեր է, որ Գրիգոր Հասան-Ջալալյանը ևս իր կաթողիկոսական իրավունքների վերահաստատմանը հասել էր մեծագին փիլքաչի²² գնով: Այս հրովարտակների քննությունից նաև պարզ է դառնում, որ կաթողիկոսական իրավունքի հաստատումը և վերահաստատումը Սեֆյան տիրակալների համար վերածվել էր շահավետ գործարքի:

Շահ Թահմասպ I-ի հրովարտակից բացի՝ Գրիգոր կաթողիկոսի անունն առկա է նաև մի քանի ձեռագրերի հիշատակարաններում ու Գանձասարի վանքում գտնվող խաչքարի վրա: Այսպես, Մակար եպս. Բարխուտարյանցը 1890 թ. Սաղիան գյուղում ընդօրինակել և «Աղուանից երկիր եւ դրացիք» գրքում հրատարակել է այնտեղ պահվող մի գրչագիր Մաշտոցի հիշատակարանը, որտեղ կարդում ենք. «Արդ գրեցաւ տառս, որ կոչի Մաշտոց, ձեռամբ անարուեստ եւ փծուն գրչի Յովհաննէս աբեղայիս՝ անուամբս միայն եւ գործովս ոչ. ի դուռն սուրբ աթոռոյս Յակոբայ վանիցս եւ ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին ի յերկիրս Խաչեն, ի գիւղս, որ կոչի Խանձք, ի հայրապետութեան Տեառն Գրիգորիսի եւ արհ(ի)եպիսկոպոսին Առքատակէսին, եւ իշխանաւոր տեղոյս Մեհրապ պէկին, եւ աշխարհակալ Շահ Դամանին ... ի թվիս Հայոց ՌԹ (1560)»²³:

¹⁸ Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ. 1956, 66:

¹⁹ Թաֆավութ-ե ջիգյախ – բառացի՝ «ջիգյախի տարբերություն»: Հայերից գանձվող գլխահարկի կամ «ջիգյախի» վրա ժամանակի ընթացքում բարդված գումարներ, որոնք հարկային մատյաններում գրանցվում և հաշվվում էին առանձին և դիտվում էին որպես առանձին պարտավորություն (տե՛ս Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ. 1956, 109):

²⁰ Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ. 1959, 87:

²¹ Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ. 1959, 158:

²² Փիլքաչ – բառացի՝ «առջևը դնել», «մատուցել»: Զանազան առիթներով բնակչության կողմից ֆեոդալներին և պետական պաշտոնյաներին նվերների անվան տակ հատուցվող տուրք, ինչպես նաև՝ ստորադաս պաշտոնյաների կողմից իրենց վերադասին կամ խոշոր ֆեոդալների կողմից շահին մատուցվող նվեր (տե՛ս Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ. 1959, 233):

²³ Բարխուտարյանց. 1999, 96, տե՛ս նաև Սմբատյանց. 1896, 246: Այժմ այս ձեռագիրը պահվում է ՄՄ-ում՝ 9872 թվահամարի տակ, իսկ հիշատակարանը գրված է 152բ–153ա թերթերի վրա:

Գրիգոր կաթողիկոսը 1563 թ. մի գեղաքանդակ խաչքար է կանգնեցրել Գանձասարի վանքի գավթում հոր՝ Մեհրաբ բեկի հիշատակին, որի վրա արձանագրված է. «Կամաւն Աստուծոյ ես Գրիգորիս կաթողիկոս կանգնեցի գՍուրբ խաչս փրկութիւն հաւր իմոյ: Սուրբ խաչս փրկութիւն պարոն Մեհրապին ի կոչման աւուրն: ԹՎին ՌԺԲ (1563)»²⁴:

Անկասկած, Գրիգոր կաթողիկոսին է վերաբերվում նաև Արցախի Մարտունու շրջանի Ծովատեղ գյուղի Կարմիր եկեղեցում գտնված մի խաչքարի անթվակիր արձանագրությունը. «Իշխանութեան Թահմազին, հայրապետութեան տեառն Գրիգորիսի, առաջնորդութեան ուխտիս Սահակայ եպիսկոպոսի ...»²⁵: Այն, սակայն, չի պահպանվել:

Գրիգոր կաթողիկոսի անունը հիշատակվում է նաև Մեծառանից Ս. Հակոբա վանքում 1564 թ. Աբեթ վարդապետի ընդօրինակած Ավետարանի հիշատակարանում, որը ընդօրինակել է նշանավոր եկեղեցական գործիչ և տեղագիր Մեսրոպ արք. Սմբատյանցը «Գրեցաւ սուրբ Աւետարանս ձեռամբ փրծուն և բազմամեղ գրչի և սուտ անուն վարդապետ Աբեթի ի գեղս Անուզ Հաւացտուն Հնգուզակ ի դուռն սուրբ եկեղեցուս, ուր մասն Պանդալիոն բժշկի և սրբոցն, որ աստ կան հաւաքեալ, ի հայրապետութեան տանս Աղուանից Տէր Գրիգորիսի, ի դանութեան Շահ Թահմազի, ի թուականութեան Հայ տումարիս ՌԺԳ (1564). գրեցաւ ... Արդ ես Թանգսիզ տուի գրել սուրբ Աւետարանս ի գաւառին Խաչենայ Արցախ նահանգի ի վանս Մեծիրանաց Ս. Յակոբայ»²⁶:

Այնուհետև Գրիգոր Հասան-Ջալալյանի անունը հանդիպում է միևնույն Ս. Հակոբա վանքում 1569 թ. ընդօրինակված Ավետարանի հիշատակարանում. «Փառք ... որ արժանի արար ... գանարժան Յոհաննէս գրիչս սուտանուն կրաւնաւոր հասանել ի վերջին գիծ սրբոյ Աւետարանիս, ի թվաբերութեան հայկազեան տումարիս ՌԺԸ (1569). ի սուրբ եւ ի գերահռչակ ուխտիս որ կոչի Յակովբայ վանք. եւ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս ... ի յերկիրս Խաչենան, ի հայրապետութեան Տեառն Գրիգորիսին, որդի Մեհրապ պէկին, եւ աշխարհակալութիւնն Շահ Թահմանին»²⁷:

Ընդ որում, հարկ է նկատել, որ 1560 թ. ընդօրինակված Մաշտոցի և 1569 թվակիր Ավետարանի գրիչ Հովհաննեսը նույն անձնավորությունն է, ինչպես պարզ է դառնում հիշատակարանի շարունակությունից. «Արդ յերեսս անկեալ աղաչեմ ... յիշել ... զիս գանարժան գրիչս Յովաննէս սուտանուն արեղայ եւ գծնաւորսն իմ»²⁸: Ինչպես տեսնում ենք, այս երեք ձեռագրերն էլ ընդօրինակվել են միևնույն վանական միջավայրում՝ Մեծառանից Ս. Հակոբա վանքում, Գրիգոր կաթողիկոսին անձնապես լավ ճանաչող գրիչների՝ Հովհաննես արեղայի և Աբեթ վարդապետի կողմից:

²⁴ Դրվան հայ վիմագրության. 1982, 67, Ուլուբայան. 1981, 147, Орбели. 2016, 143. Վերջին հեղինակի մոտ բացակայում է թվականը:

²⁵ Դրվան հայ վիմագրության. 1982, 161, Բարխուտարեանց. 1999, 215, Լալայան. 1988, 43:

²⁶ Սմբատեանց. 1896, 243: Թերի ընդօրինակությունը տե՛ս Բարխուտարեանց. 1999, 110, որտեղ դուրս է մնացել Գրիգոր կաթողիկոսի անունը:

²⁷ Յուզակ հայերէն ձեռագրաց Զմամառի վանքի մատենադարանին. 1971, 52:

²⁸ Յուզակ հայերէն ձեռագրաց Զմամառի վանքի մատենադարանին. 1971, 52:

Հայաստանի ազգային արխիվում *և*. վրդ. Դադյանի ֆոնդում, պահվում է նաև նրա ընդօրինակություններ մեզ հասած 1571 թվակիր Ավետարանի հիշատակարանը, որտեղ գրված է. «Ի թվիս Հայոց Ռի (1571) ի դուռն սուրբ յաթողիս յԱմենափրկչէ և ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին ի յերկիրս Խաչեան, ի հայրապետութեան տեառն Գրիգորիսին՝ որդի Մեհրապ պէկին. իշխանութեան Շահ Թահմասին»²⁹: Շարադրանքի ոճային ակնհայտ ընդհանրությունները 1560 և 1569 թթ. բնագրերի հետ թույլ են տալիս ենթադրել, որ այս հիշատակարանի գրիչը ևս Հովհաննես արեղան է:

Այսպիսով, Գրիգոր կաթողիկոսի անունը հանդիպում է Սեֆյան շահ Թահմասալ I-ի հրովարտակում (1555 և 1570 թթ.), Գանձասարի վանքի գավթում գտնվող մի խաչքարի վրա (1563 թ.), Աբեթ վարդապետի (1564 թ.) ու Հովհաննես արեղայի (1560 և 1569 թթ.) և *և*. վրդ. Դադյանի ընդօրինակություններ մեզ հասած (1571 թ.) հիշատակարաններում:

Որպես Գանձասարի կաթողիկոս՝ Գրիգորի անունը վերջին անգամ նշվում է Աբրահամ արեղայի 1574 թ. հիշատակարանում, որից հետո նա դարձել է Սեֆյան Իրանի ձուլողական քաղաքականության հերթական զոհը³⁰: Կասկածից վեր է, որ մահմեդականության ընդունումը որևէ կերպ չէր մտնում Գրիգոր կաթողիկոսի «ծրագրերի» մեջ: Փաստորեն, գործ ունենք տասնինը տարի (1555–1574 թթ.) Գանձասարի կաթողիկոսական աթոռը զբաղեցրած մարդու՝ պարտադրված ուրացության փաստի հետ: «Ջադիդ-ուլ-խալամ» («նոր մահմեդական») Գրիգորի մասին սկզբնաղբյուրներն այլևս ոչինչ չեն հաղորդում:

Դիտարկումներ Գանձասարի Գրիգոր կաթողիկոսի ուրացության պատճառի շուրջ

Գանձասարի Գրիգոր կաթողիկոսի ուրացության պատճառի քննությանը նվիրված միակ աշխատանքը հայտնի պատմաբան Բազրատ Ուլուբաբյանի «Մի առեղծվածի հետքերով» ուղագրով հոդվածն է, որը լույս է տեսել հեղինակի «Ոսկե շղթա» ժողովածուում³¹:

Եթե հակիրճ ներկայացնելու լինենք Բ. Ուլուբաբյանի վարկածի էությունը, ապա ըստ նրա՝ Գրիգոր կաթողիկոսը «այսմանավորվել էր» Վրաց (Քարթլիի) թագավոր Սիմեոն I-ի (1558–1600) հետ ««Մեծ թուրքի ու Սոֆիի (շահ Թահմասալ I – Ա. Մ.)» անարգ տիրապետությունից փրկվելու նպատակով Ռուսա-

²⁹ ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 44, թ. 37բ: Հիշատակարանի ներքևում գրված է. «Ես՝ Գրիգոր կաթողիկոս, իմ կամաւ տվի սուրբ Աւետարանս Պարդամին: Ես՝ տէր Եղիաս վկայ եմ: Ես՝ տէր Խաչատուր վկայ եմ: Ես՝ Պայրնդուր վկայ եմ»: Չորս կնիք կնքած. «Քրիստոսի ծառայ Գրիգոր կաթողիկոս» և վարդապետք 3, իսկ Պայրնդուրինը թուրքերեն կնքած. «Բայրնդուր» (տե՛ս նույն տեղում):

³⁰ Այդ մասին տե՛ս Փ ա փ ա գ յ ա ն. 1956, 85–99, Դ ա ն ե ղ յ ա ն. 1969, 68–92, Կ ա Ր ա պ ե տ յ ա ն. 1988, 219–221:

³¹ Ուլուբաբյան. 1979, 166–177: Հարկ է նկատել, որ հոդվածում հեղինակը սխալմամբ Գրիգոր կաթողիկոսին համարում է «հայրենասեր իշխան Վելիջանի որդին» (էջ 166): Այդ սխալը նա ուղղել է իր հաջորդ՝ «Գանձասար» աշխատությունում (տե՛ս Ուլուբաբյան. 1981, 147–148):

կան ցարի օգնությունը դիմելու համար ...»³²: Ընդ որում, ըստ հեղինակի, «քանի որ թագավորների հետ միայն թագավորները կարող էին բանակցել ու քաղաքական կոնկրետ վճիռներ հանել, ուստի պայմանավորվել էին, որ Սիմեոն թագավորն իր ուսումնասիրության քաղաքականությունը հանդես պիտի գա ոչ միայն իրեն հպատակ Վրաստանի, այլև Արևելյան Հայաստանի անունից»³³: Իսկ Ռուսաստանի ցարն այդ ժամանակ ոչ այլ ոք էր, եթե ոչ՝ հռչակավոր Իվան IV Ահեղը (1547–1584): Սակայն, ըստ Բ. Ուլուբաբյանի՝ վրա է հասնում եղերական վերջաբանը: «Թմրած-ննջած չէին շահի գործակալները հայկական նահանգներում ու հենց Սիմեոն խանի Վրաստանում, – գրում է նա: – Նրանք իրենց տիրոջն էին հասցրել Անդրկովկասում բորբոքված հակաթուրքական ու հակապարսկական խլրտումների և Ռուսական ցարի հետ քաղաքական կապերի մեջ մտնելու նախապատրաստություն մանրամասները»³⁴: Ըստ Բ. Ուլուբաբյանի՝ դրանից «անմիջապես» հետո շահ թահմասպին իր մոտ է կանչում վրաց Սիմեոն թագավորին ու Գանձասարի Գրիգոր կաթողիկոսին, որից հետո լուր է հասնում, թե «նրանք գրկվել են իրենց ... հավատից»³⁵: Հիմնական գծերով այս էր պատմաբանի վարկածի էությունը: Իր տեսակետը հիմնավորելու համար նա բերում է XVI դարի պատմագիր Հովհաննիսիկ Ծարեցու ժամանակագրության հետևյալ հատվածը. «Եւ զոմն Բագրատունի թագաւոր Վրաց, Սիմոն կոչեցեալ, որ երբեմն վասն անհնազանդութեան ըմբռնեալ էր ի յառաջ ասացեալ Դահմազ շահէն, և տկարացեալ ի հաւատոցն և կայր առ նա ընդ ձեռամբ: Իսկ ի թագաւորելն Իսմայէլին շնորհեաց զհայրենի իշխանութիւնն և զտեղիքն Սիմոնին, զնայ իշխել իւրոցն և մնալ յօրինօքն Մահմետի: Եւ նա զնացեալ ի տեղի իւր ի Տփլիս, յանդիմանեալ եղև յառաջնորդաց և քահանայից իւրոց, մանաւանդ ի կնոջն և ի յրնդանեացն իւրմէ, յուրացող և յապերախտ կոչելով զնայ և ոչ հաղորդելով ընդ նմայ: Ի յայսմանէ ստրկացեալ նորա զղջացաւ զտաճկութիւնն, և դաւանեաց վերջստին զխաչն Քրիստոսի յերկրպագելի...»³⁶: Փաստորեն, Բ. Ուլուբաբյանը Գանձասարի Գրիգոր կաթողիկոսի և վրաց Սիմեոն թագավորի մահամեղականությունը ընդունելու միջև ուղղակի կապ է տեսնում:

Այստեղ հարկ ենք համարում նշել, որ ինչպես իրավացիորեն նկատել է ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը, «իրանցիների կողմից վրաց թագավորները ճանաչված էին սոսկ որպես «կառավարիչներ» կամ «վալիներ» ու «խաներ»: Այդ արգելք չէր, որ վրաց նույն այդ իշխողները թագավորներ կոչվեին Վրաստանում և որպես այդպիսիներ նաև ճանաչվեին վրաց միջնադարյան հանրության կողմից»³⁷:

Ըստ վրաց պատմաբաններ Ն. Բերձենիշվիլու, Ի. Զավախիշվիլու և Ս. Զանաչիայի հեղինակած «Վրաստանի պատմություն» գրքի՝ Քարթլիի Սիմեոն թագավորը 1569 թ. Ալեքեթ գետի կիրճում՝ Փարցխիսի մոտ, տեղի ունեցած

³² Ուլուբաբյան. 1979, 175:

³³ Ուլուբաբյան. 1979, 175:

³⁴ Ուլուբաբյան. 1979, 175:

³⁵ Ուլուբաբյան. 1979, 176:

³⁶ Մանր ժամանակագրություններ XIII–XVIII դդ.. 1956, 241–242, Դաւրի ժեցի. 1990, 458, տե՛ս նաև Ուլուբաբյան. 1979, 176:

³⁷ Հովհաննիսյան. 1957, 159:

ճակատամարտում գերվել է ղզբաշների կողմից ու տարվել Իրան: Վերջինս մերժել է մահմեդականություն ընդունելու՝ շահ Թահմասափ պահանջը, որից հետո նետվել է Ալամութի բերդը³⁸:

Իսկ Սիմեոն թագավորի գերեվարումից մեկ տարի անց՝ 1570 թ. ապրիլին, Ինչպես արդեն նշվել է, Գրիգոր Հասան-Ջալալյանը նոր միայն եղել է Ղազվինում և այնտեղից վերադարձել իր կաթողիկոսական իրավունքները վերահաստատող շահական հրովարտակով: Ընդ որում, Գրիգոր կաթողիկոսին տրված շահ Թահմասափ ֆերմանում հստակ արձանագրված էր. «Թող տեղի կրոնավորներն ու քահանաները, քյաղխուղաներն ու ուսուցիչները նրան ճանաչեն որպես իրենց առաջնորդն ու ղեկավարը և նրա խոսքի ու խրատների սահմաններից դուրս չգան, և թող ոչ մի արարած նրա հոգևորականներին ու մերձավորներին նեղություն չպատճառի, և թույլ տրվի, որպեսզի նրանք իրենց վերաբերող գործերով զբաղվեն ... Թող սա համարեն խիստ կարգադրություն, և հրամայվածին չհակառակեն ... , տեղի հայերից որևէ մեկին թույլ չտալ հակառակել սույն գրություն բովանդակությանը»³⁹: Ինչպես տեսնում ենք, վրաց Սիմեոն թագավորի գերություն և Գանձասարի Գրիգոր կաթողիկոսի մահմեդականություն ընդունելու միջև որևէ կապ չկա:

Շահ Թահմասափ մահից հետո իշխանությունն անցնում է նրա ավագ որդուն՝ շահ Իսմայիլ II-ին (1576–1578): XVII դ. վրաց հայտնի պատմագիր Փարսադան Գորգիջանիձեն հաղորդում է, որ հենց այս շահի կարգադրությամբ էլ Սիմեոնն ազատվել է Ալամութի գերությունից և տարվել Ղազվին, «որտեղ պահվում էր պատիվներով»⁴⁰: Նա պատրաստվում էր Սիմեոնին ուղարկել Վրաստան, սակայն այդ ընթացքում դավադրության գոհ է դառնում⁴¹:

Իսմայիլ շահի սպանությունից հետո իշխանությունն անցնում է Մուհամադ Խուղաբանդեին (1578–1587), որը շահ Թահմասափ երկրորդ որդին էր⁴²: Հենց վերջինիս հարկադրանքով էլ Սիմեոն թագավորը 1578 թ. ընդունել է մահմեդականություն, որից հետո մեծ պատիվներով ուղարկվել է Վրաստան, իսկ նրան տված հրովարտակում Խուղաբանդե շահը Սիմեոնին անվանել է «իր եղբայրը»⁴³: Ակնհայտ է, որ Սեֆյան իշխանությունները նրան ցանկանում էին օգտագործել իրենց մշտական թշնամու՝ Օսմանյան Թուրքիայի դեմ մղած պատերազմում: Ըստ երևույթին, մահմեդականության ընդունումը եղել է այն գինը, որը վճարել է Քարթլիի տարաբախտ արքան հայրենիք վերադառնալու հնարավորություն ստանալու համար: Սիմեոն թագավորի գերությունից ազատվելու ժամանակ (1578 թ.), ամենայն հավանականությամբ, Գանձասարի նախկին կաթողիկոսը կամ գտնվում էր Ղազվինում, կամ ողջ չէր:

³⁸ Бердзенишвили, Джавахишвили, Джанашиа. 1950, 324–325.

³⁹ Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ. 1956, 66:

⁴⁰ Горгиджанидзе. 1990, 40.

⁴¹ Горгиджанидзе. 1990, 60.

⁴² Лейн-Пул. 2020, 194.

⁴³ Горгиджанидзе. 1990, 40, 60; Тбилисская коллекция персидских фирманов. 1989, 1006.

ՄՄ-ի կաթողիկոսական դիվանում պահվում է վրաց Սիմեոն թագավորի՝ 1594 թ. հունվարի 22-ի հրովարտակը՝ Գորիի հայ քահանաներին թարխան⁴⁴ հայտարարելու և հարկերից ազատելու մասին⁴⁵: Այս վավերագիրը կարևոր է այն հանգամանքով, որ տրված է Մահմուդ Միրզա խանի կողմից, որը Քարթլիի թագավորի մահմեդական անունն է, իսկ հրովարտակի վերին մասում XIX դարում կատարված մակագրությունը հաղորդում է. «Վրաց Սիմեոն թագաւորից ազատութեան թուղթ քահանաներին»⁴⁶: Սույն փաստաթղթից ակնհայտ է դառնում, որ 1594 թ. դրությամբ Սիմեոն թագավորը հանդես է եկել մուսուլմանական Մահմուդ Միրզա խան անունով և տակավին մնում էր մահմեդական, ինչն էլ նշանակում է նա վերամկրտվել է այդ թվականից հետո:

Հայրենիք վերադառնալուց հետո Սիմեոն թագավորը գլխավորել է Վրաստանում բռնկված հակասոմանյան պայքարը: Նրա գլխավորությունը վրացական ուժերը 1599 թ. գարնանը օսմանյան զորքերից ազատագրեցին Գորիի բերդը: Այդ մասին վրաց անանուն «ժամանակագրություններից» մեկում կարդում ենք. «1578 թ. Ալիմոն թագավորը՝ վերադառնալով օտարությունից (գերությունից)՝ գրավեց Գորվա բերդը, նվաճեց Քարթլին, Սոմխիթն ու Լոռին»⁴⁷: Մեկ տարի անց՝ 1600 թ., Նախիդուրիի մոտ տեղի ունեցած ճակատամարտում Սիմեոնը գերվում է օսմանյան զորահրամանատար Զաֆար փաշայի կողմից, ինչպես արձանագրված է «Քարթլիս ցխովրեբայի» («Քարթլիի կյանքը») շարունակություն մեջ. «Գրիատոսի 1600-ին ... վրացիք՝ իմանալով Սիմեոն թագավորի հաջողության մասին՝ հույժ ուրախացան ... Ապա օսմանցիք գրավեցին Լոռու բերդն, ուր և մտցրին իրենց պահապաններին, և գնացին տանելով հետո Սիմեոն (Ալիմոն) թագավորին, որին և հասցրին Ստամբոլ»⁴⁸: Այստեղի եղիկալ է («Յոթնաշտարականի») բերդում էլ վրաց Սիմեոն թագավորը մի քանի տարի անց կնքում է իր մահկանացուն: Ըստ էության, օսմանյան թուրքերի դեմ մղած տևական պայքարով նա իրեն զրսևորել է որպես Սեֆյան Իրանի բնական դաշնակից:

Կարծում ենք, Բ. Ուլուբաբյանի առաջ քաշած վարկածի հիմնական թերությունն այն է, որ նա փորձել է որևէ հակապետական հանցանք մեղսագրել Գրիգոր կաթողիկոսին: Եվ քանի որ նրան չի հաջողվել «հայտնաբերել» նմանատիպ արարք, ապա նա, ժամանակի զաղափարական մտայնությամբ, «նամակ ուսաց թագավորին» է վերագրել Գանձասարի կաթողիկոսին⁴⁹: Մինչդեռ, ինչպես տեսանք, Գրիգոր կաթողիկոսի իրավունքներն ընդամենը մի

⁴⁴ Թարխան (մոնղոլ.) – իլխանության շրջանից պահպանված տերմին, որը նշանակում է «հարկային իմունիտետ վայելող» (տե՛ս Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ. 1956, 109):

⁴⁵ Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ. 1956, 74–75:

⁴⁶ ՄՄ, ԿԴ, թղթ. 1ա, վավ. 25:

⁴⁷ Մ ե լ ի ք ս ե թ-բ ե կ. 1955, 287:

⁴⁸ Մ ե լ ի ք ս ե թ-բ ե կ. 1936, 138–139:

⁴⁹ Հարկ է նկատել, որ Արևելյան Հայաստանից Ռուսաստանի ցարին ուղղված առաջին նամակը կրկին հղվել է Գանձասարի աթոռից, սակայն նշված իրադարձություններից շուրջ մեկ դար անց: Դա Գանձասարի կաթողիկոս Պետրոս Խանձքեցու 1672 թ. դեկտեմբերի 2-ի նամակն է ուղղված Արևքսեյ Միխայլովիչ ցարին (1645–1676)՝ Նոր Զոդայի հայ վաճառականներին արտոնություններ չնորհելու խնդրանքով (տե՛ս Армяно-русские отношения в XVII веке. 1953, 91–92):

քանի տարի առաջ էին հաստատվել շահական «բարձրագույն և սրբազնագույն» կնիքով «զարդարված ու պայծառափայլված» հրովարտակով, իսկ նրա հակաթու Մաղաքիան գրկվել էր կաթողիկոսական իրավասություններից: Դրանից հետո նա անձնական որևէ շարժառիթ չպետք է ունենար հյուսիսային երկրի իր համար անհայտ ցարին դիմելու համար:

Միաված չենք լինի, եթե պնդենք, որ Գրիգոր կաթողիկոսին բռնություններ մահմեդականացնելու պատճառը պետք է որոնել Սեֆյան Իրանի՝ մերթերմեր-մերթ սրվող կրոնական անհանդուրժողականության քաղաքականության մեջ:

Շահ Թահմասապի իշխանության օրոք Սեֆյան Իրանում տիրող կրոնական անհանդուրժողականության մասին ուշագրավ վկայություններ է թողել անգլիացի ճանապարհորդ և վաճառական Անտոնի Ջենկինսոնն իր «Ուղեգրության» մեջ: Նա, որպես Անգլիայի եղիսաբեթ I թագուհու դեսպան, 1561 թ. եղել է Ղազվինում, որտեղ հանդիպել է շահ Թահմասապին: Ջենկինսոնն այսպես է նկարագրում իր մուտքը շահական պալատ. «Նոյեմբերի 20-ին ես հրավիրվեցի ներկայանալու հիշյալ Սոֆիին, այլապես կոչված Շահ Թամաս (Շահ Թահմասապ) ... և պալատի դռան ձիուց վար իջնելուս պես, ոտքս գետին դաչելուց առաջ իմ ոտքին հագցրին Սոֆիի սեփական կոշիկները, պարսկական լեզվով կոչված բաշմակ, ճիշտ նման նրանց, որ նա հագնում է, երբ գիշերները վեր է կենում աղոթելու ... , որովհետև առանց այդ կոշիկների չեն կարող հանդուրժել, որ ես քայլեմ նրա սուրբ հողի վրա, լինելով քրիստոնյա, և կոչված նրանցից դավուր (Gower), այսինքն՝ անհավատ և անմաքուր ...»⁵⁰:

Իր քրիստոնյա լինելը հայտնելուց հետո, երբ նա շահ Թահմասապին է փոխանցել Անգլիայի թագուհու նամակները, վերջինս արհամարհանքով նետել է նրան. «Եյ, դու անհավատ... , մենք պետք չունենք բարեկամություն ունենալու անհավատների հետ, և այսպես կամեցավ, որ ես մեկնեի: Դրան ես ուրախ լինելով, խոնարհություն արի և մեկնեցի, ընկերացած իր մի շատ ազնվականների և ուրիշների հետ, և ինձ հետևում էր մի մարդ, մի կոնք լի ավազով (մոխրով – Ա. Մ.), որ ցրում էր պալատի այն ճանապարհին, որից ես անցնում էի, նույն իսկ հիշյալ Սոֆիի աչքի առջևից մինչև պալատի դուռը»⁵¹:

Այս փաստերը չափազանց կարևոր են շահական արքունիքում քրիստոնյաների հանդեպ վերաբերմունքը պատկերելու առումով: Իսկ Ջենկինսոնի Ղազվինում գտնվելուց (1561 թ.) մինչև Գանձասարի Գրիգոր կաթողիկոսի ուրացությունը (1574 թ.) բաժանում է տասներեք տարի: Չենք կարծում, թե Սեֆյան արքունիքի արարողակարգը հական փոփոխություններ է կրել այդ ընթացքում, մանավանդ որ, ինչպես գրում է 1571 թ. Ղազվինում եղած Վենետիկի դեսպան Վինչենցո դ'Ալեսանդրին, շահ Թահմասապը «տասնամեկ տարիներից ի վեր դուրս չի եկել իր պալատից»⁵²: Այս համատեքստում հարց է ծագում, թե արդյո՞ք մոխիր չեն ցանել նաև «բաշմակներով» (բախիլ) շահական պալատում շրջող Գրիգոր կաթողիկոսի հետևից:

Իսկ ինչպե՞ս է տեղի ունեցել քրիստոնյաների մահմեդականացումը Սեֆյան Իրանում: Այդ մասին հստակ վկայություն է թողել արդեն XVII դ. 70-ական թվականների սկզբներին այդ ժամանակվա Սեֆյան պետության մայ-

⁵⁰ Հակոբյան. 1932, 382:

⁵¹ Հակոբյան. 1932, 384:

⁵² Հակոբյան. 1932, 337, Sykes. 1921, 170.

րաքաղաք Սպահանում⁵³ գտնված Հայազգի կաթողիկ միսիոներ Պետրոս Պետիկը, որը հյուրընկալվել էր Նոր Զուղայի քաղաքի Աղա Փիրրի տանը: Նա իր «Cehil Sutan» («Քառասուն սյուն») աշխատության մեջ գրում է, որ շահ Սուլեյմանի (1666–1694) գործադրած ճնշման հետևանքով 1673 թ. օգոստոսի 24-ին Աղա Փիրին ընդունում է մահմեդականություն և ստանում է Մուհամմադ Փիրի անունը: «Երբ շահը նկատեց նրա (քաղաքի) շքեղությունը՝ ասաց նրան, որ պետք է հրաժարվի իր հավատքից, – գրում է Պետիկը: – Նա սկզբից հրաժարվեց՝ առաջնորդվելով շատ առողջ պատճառաբանությամբ: Բայց շահը համառորեն ճնշում գործադրեց և քաղաքի շահի ներկայությամբ պետք է ուրանար հավատքը կամ կորցնեք կյանքը: Հուսալքվելով այս կարգադրությունից՝ նա նախընտրեց իր երկրային կյանքը երկնայինից՝ միանալով մուսուլման համայնքին շահի առաջ, այլ մեծամեծերի և Իրանի հոգևոր առաջնորդի ներկայությամբ»⁵⁴:

Կարծում ենք՝ միևնույն 1673 թ. է գրվել նաև Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի Հայտնի նամակը Ռուսաստանի ցար Ալեքսեյ Միխայլովիչին, որտեղ կրկին խոսվում է Սեֆյան իշխանությունների կողմից հայերին բռնությամբ մահմեդականացնելու մասին: «Պարսկաստանում մեզ և մեր եկեղեցու վրայ պարսից պաշտօնեաների կողմից դրւում են ահա օտարօտի հարկեր, – կարդում ենք նամակում, – և մեզ, որ չենք կարողանում մեր չքաւորութեան և աղքատութեան շնորհիւ հատուցանել այդ հարկերը, քշում են դէպի բանդ, չարչարում են, տանջում և վերջապէս, որ յետինն է ու գլխաւորը մահմետականների նպատակների՝ իրանց դաւանանքն են հարկադրում ընդունել (ընդգծումը մերն է – Ա. Մ.)»⁵⁵:

Հարկ է նշել, որ Թահմասպ I-ի կողմից Գանձասարի Գրիգոր կաթողիկոսը դիտվում էր որպէս Սեֆյան Իրանի ամենամեծ և ազդեցիկ «գլխամի»⁵⁶ ժողովուրդներից մեկի օրինակարգ (լեզիտիմ) հոգևոր առաջնորդը, որի իրավունքները հաստատվել էին շահական հրովարտակով: Հետևաբար, նման ազդեցիկ հոգևորականին մահմեդականացնելով Սեֆյան իշխանություններն անուղղակի կրոնափոխության ուղերձ էին հղում նաև նրա հավատավոր հոտի անդամներին:

Այսպիսով, շահ Թահմասպի կողմից Գրիգոր կաթողիկոսին եղել է մահմեդականություն ընդունելու «հրավեր», որն ոչ այլ ինչ էր, եթե ոչ անցիժում և անողոք մի հարկադրանք, որի հակառակ կողմում մահվան չարագույժ ստվերն էր: Եվ, ահա, կյանքի ու մահվան այդ ընտրանքում Գանձասարի Գրիգոր կաթողիկոսն ընտրել է կյանքը: Մահմեդականություն ընդունելով՝

⁵³ Շահ Աբբաս I-ը 1597/98 թ. Սեֆյան պետության մայրաքաղաքը Ղազվինից տեղափոխել էր Սպահան (տե՛ս И в а н о в. 1952, 66):

⁵⁴ A Man of Two Worlds. Pedros Bedik in Iran 1670–1675. 2014, 348.

⁵⁵ Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1915, 781, Армяно-русские отношения в XVII веке. 1953, 98, 257.

⁵⁶ Զլխամի (արաբ.) – բառացի՝ «պարտապան»: Այդպես էին կոչվում քրիստոնյա և հրեա հպատակները, որոնք ի տարբերություն մուսուլման հպատակների, բոլոր հարկերից ու պարտավորություններից բացի, պարտավոր էին վճարել նաև հատուկ գլխահարկ՝ «Չիզյա», որով իրավունք էին ստանում իրենց կրոնը դավանելու (տե՛ս Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ. 1956, 108):

Գրիգոր Հասան-Ջալալյանն այրում էր կապերն իր կաթողիկոսական անցյալի հետ:

Իրադարձությունները Գանձասարի կաթողիկոսությունում Գրիգոր կաթողիկոսի ուրացությունից հետո

Գրիգոր Հասան-Ջալալյանի ուրացությունից հետո Գանձասարի կաթողիկոսական աթոռն անցնում է Դավիթ կաթողիկոսին: Նրա մասին Աղվանից կաթողիկոսների Գավազանագրքում կարդում ենք. «Տէր Դաւիթ Արջաձորեցի. նոյն ամին խեղդեն կախեալ ժամատանէն Գանձասարու չար անիծեալք ինչին»⁵⁷: Նույն տեղեկությունը Սիմեոն Երևանցու «Ջամբու» աշխատությունում ներկայացված է այսպես. «Տէր Դաւիթ, որ խելադեցաւ»⁵⁸, առանց որևէ հստակեցման: Այս սեղմ տողերը թարգմանում են Գանձասարի կաթողիկոսության պատմության հետ կապված ևս մեկ առեղծված:

Իսկ Հովհաննես եպս. Շահխաթունյանցի կազմած ցանկում Դավիթ կաթողիկոսի մասին գրված է. «Տէր Դաւիթ Թ Արջաձորեցի. զսա ի նոյն ամի կախեալ ի ցանգակատանէն եկեղեցոյ Գանձասարու խեղդամահ առնեն խաչէնեցիք»⁵⁹: Այս տեղեկության հիման վրա Մակար եպս. Բարխուտարյանցը գրում է, թե քրիստոնեությունն ուրացած Գրիգոր կաթողիկոսին «տեղակալում է Տէր Դաւիթ Թ Առաջաձորցի նոյն իսկ թւին. սակայն խաչենցիք մեց անյայտ պատճառաւ խեղդում են կախելով Գանձասարի զանգակատնից»⁶⁰: Այսպիսով, ստեղծվել է թյուր տպավորություն, թե, իբր, Դավիթ կաթողիկոսը Հասան-Ջալալյան չէր և սպանվել է նախկին կաթողիկոսի տոհմակիցների կողմից: Մասնավորապես, Հ. Փափազյանն այդ մասին գրում է. «Պետք է ենթադրել, որ Տեր Դավիթին սպանել են հենց ինչպես Հասան-Ջալալյանները, որոնք ժառանգաբար իրենց ձեռքում էին պահում Գանձասարի կաթողիկոսությունը»⁶¹:

Մինչդեռ, Արցախի առաջին թեմակալ առաջնորդ Բաղդասար մետրոպոլիտի 1838 թ. հրատարակած «Ժամագրքի» վերջում տեղ գտած, նրա կազմած «Անուանք և թիւք Կաթողիկոսացն Աղուանից» վերտառությամբ ցանկում հստակ գրված է. «Տէր Դաւիթ Հասան Ջալալեանց»⁶²: Այս հարցի լավագույն պատասխանը տալիս է Գանձասարի վանքի գավթում գտնվող նրա տապանաքարի արձանագրությունը. «Այս է հանգիստ Դաւիթ կաթողիկոսին, որդի Բաղտասար պէկին»⁶³:

⁵⁷ ՄՄ, ձեռ. № 2561, թ. 262բ, ՄՄ, ԿԴ, թղթ. 240, վավ. 132, թ. 3, տե՛ս նաև՝ Մ ա ղ ա լ յ ա ն. 2008, 270:

⁵⁸ Երևանցի. 2022, 121:

⁵⁹ Շահխաթունեանց. 1842, 344, ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 80, թ. 21բ:

⁶⁰ Բարխուտարեանց. 1907, 21:

⁶¹ Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ. 1959, 154:

⁶² Ժամագրք. 1838, 589: Մենք օգտվել ենք այս գրքի ՄՄ-ում պահվող միակ օրինակից, որի տիտղոսաթերթն ընկած է: «Ժամագրքի» մասին մեզ տեղեկացրել և դրա տպագրության թվականը ճշտել է պ. գ. թ. Ս. Պետոյանը (տե՛ս Պետոյան. 2021, 111):

⁶³ Դիվան հայ վիմագրության. 1982, 66, Ուլուբաբյան. 1981, 145, ՀԱԱ, ֆ. 319, ց. 1, գ. 5, թ. 13ա:

Այլ աղբյուրներից հայտնի է, որ Բաղդասար բեկը Գրիգոր կաթողիկոսի հարազատ եղբայրն էր և Խաչենի իշխան Մեհրաբ բեկի որդին⁶⁴, այսինքն՝ Դավիթ կաթողիկոսը Գրիգորի եղբորորդին էր: Հետևաբար, Դավիթ կաթողիկոսի նախկին կաթողիկոսի տոհմակիցների կողմից սպանված լինելու վարկածը, կարծում ենք, հերքվում է: Մնում է Գանձասարի կաթողիկոսների Գավազանագրքում հիշված՝ «Խաչի չար անիծյալների» («չար անիծեալք Խաչին») տարբերակը: Իսկ ովքե՞ր էին նրանք, որոնց համարձակությունը թույլ էր տվել Խաչենի նախկին իշխանի թոռանը՝ գործող կաթողիկոսին, կախել հենց Գանձասարի վանքի զանգակատնից: Արդյո՞ք դրանք Հասան-Ջալալյանների հակառակորդները չէին, որոնք Գանձասարի կաթողիկոսական թոռին նստեցրին Փիլիպոս Տումեցուն, որն այդ տոհմից չէր: Այս հարցը մնում է Գանձասարի կաթողիկոսության պատմության և բուն Գավազանագրքի առեղծվածներից մեկը:

Այդ ժամանակների մասին վերջին վկայությունը պատկանում է Մեհրաբ բեկի ավագ որդի և Գրիգոր կաթողիկոսի եղբայր Ջալալ բեկին, որի թողած 1606 թ. հիշատակարանում կարդում ենք. «Վերջին ըստացաւ պ. Աւետարանիս պարոն ճալալ բէկս, որդի Մըհրապ բէկին, որ ըստացաւ զպ. Աւետարանս ի հալալ ինչից իւրոց և արդար վաստակոց, ի յիշատակ հոգոյ իւրոյ, և ծնողաց իւրոց, հաւրն՝ Մըհրապ բէկին և մաւրն իւրոյ՝ Շահումաղին, և հանգուցեալ եղբայրցն իմոյ՝ պարոն Պաղտաս[ար] բէկին, Յոհաննէս կաթողիկոսին, Գրիգոր կաթողիկոս[ին], Դաւիթ կաթողիկոսին՝ որ է որդի պարոն Պաղտասար բէկին և հանգուցեալ որդոցն՝ Պայայդուր բէկին, Մըհրապ բէկին, և կենդանի որդին՝ [Վէ]լիճան բէկին ... Արդ՝ գրեցաւ ի թվաբերութիւնս Հայոց ՌԾԵ (1606)»⁶⁵:

Դժվար չէ նկատել, որ Խաչենի իշխան Ջալալ բեկն իր ընդարձակ հիշատակարանում ոչինչ չի գրում եղբոր՝ Գրիգոր կաթողիկոսի ուրացության մասին: Կասկածից վեր է, որ Ջալալ բեկը տեղյակ էր նրա կրոնափոխության պատճառի մասին, և, եթե լուրջամբ շրջանցել է այդ փաստը, նշանակում է՝ հոգեպես հաշտ է եղել իր եղբոր հետ: Ըստ երևույթին, Խաչենի իշխանը քաջ գիտակցում էր շահական հարկադրանքի այն վիժխարի ուժը, որին անկարող էր եղել դիմակայել իր կաթողիկոս եղբայրը⁶⁶:

Եզրակացություն

Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսների Գավազանագրքում և զանազան ցանկերում շրջանառվում է մի տեղեկություն XVI դարում քրիստոնեությունն ուրացած Գրիգոր Հասան-Ջալալյան կաթողիկոսի մասին: Երկար

⁶⁴ Ուլուբաբյան. 1975, 357, 360:

⁶⁵ ՄՄ, ձեռ. № 5794, թ. 207ա, Հայերեն ձեռագրերի ԺԷ դարի հիշատակարաններ (1601–1620 թթ.). 1974, 207–208:

⁶⁶ Հարկ է նկատել, որ սկզբնաղբյուրներով չի հաստատվում Բ. Ուլուբաբյանի այն պնդումը, թե «Գրիգորի գահակալության տարիներին Խաչենի տարածքում ընդօրինակված ձեռագրերի հիշատակարաններում ետին թվով ջնջել են նրա անունը» (տե՛ս Ուլուբաբյան. 1979, 176): Արդեն տեսանք, որ Գրիգոր կաթողիկոսի անունը պահպանվել է ինչպես Խաչենի իշխանության տարածքում գրված առնվազն հինգ ձեռագրերի հիշատակարաններում, այնպես էլ՝ Գանձասարի վանքի գավթում գտնվող խաչքարի արձանագրության մեջ:

ժամանակ այդ տեղեկությունը հանելուկ էր մնում: Եվ, ահա, Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի մատենադարանում պահվող Ավետարանի գրիչ Աբրահամ արեղայի հիշատակարանի հրապարակումից հետո (1970 թ.) ակնհայտ դարձավ, որ Գրիգոր կաթողիկոսը 1574 թ. բռնություններ մահմեդականացվել է Սեֆյան շահ Թահմասպ I-ի կողմից: Ընդ որում, հայոց կաթողիկոսների մեջ նա միակն է, որը մահմեդականացվել է:

Գրիգոր կաթողիկոսի իրավունքները նախապես հաստատված են եղել շահ Թահմասպ I-ի 1555 թ. հրովարտակով և վերահաստատվել են 1570 թ.: Նրա անունը հանդիպում է նաև Գանձասարի վանքի գավթում 1563 թ. կանգնեցված խաչքարի վրա և 1560, 1564, 1569 ու 1571 թթ. հիշատակարաններում:

Կարծում ենք՝ Գրիգոր կաթողիկոսին բռնություններ մահմեդականացնելու բուն պատճառը պետք է փնտրել Սեֆյան Իրանի՝ մերթնդմերթ սրվող կրոնական անհանդուրժողականության քաղաքականության մեջ: Սեֆյան իշխանությունների կողմից Գանձասարի Գրիգոր կաթողիկոսը ճանաչված էր որպես Հյուսիսարևելյան Հայաստանի և Կուրի ձախափնյակի հայության օրինակարգ (լեգիտիմ) հոգևոր առաջնորդ: Նրան բռնություններ մահմեդականացնելով Սեֆյան շահն անուղղակի կրոնափոխության ուղերձ էր հղում նաև նրա հավատավոր հոտի անդամներին:

Գրիգոր կաթողիկոսից որպես հուշ մնում է Գանձասարի վանքի գավթում իր հոր՝ Մեհրաբ բեկի հիշատակին 1563 թ. կանգնեցրած խաչքարի արձանագրությունը. «Կամաւն Աստուծոյ ես Գրիգորիս կաթողիկոս կանգնեցի զՍուրբ խաչս փրկութիւն հաւր իմոյ», որի այս տողերը վերաբերելի են նաև հենց իրեն:

Արտակ Մաղալյան – պ. գ. թ., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի միջին դարերի պատմության և Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի միջնադարյան աղբյուրագիտության բաժինների ավագ գիտաշխատող, «Գեղարդ» գիտափորձական հիմնադրամի աշխատակից: Գիտական հետաքրքրությունները՝ Արցախի մեկիջումների ու Ղարաբաղի խանության պատմություն և աղբյուրագիտություն, Իրանի Նադիր շահի պետության պատմություն ու հայ-իրանական առնչություններ: Հեղինակ է 5 գրքի և շուրջ 80 հոդվածի: ORCID:0009-0001-7687-3460; artak_77@mail.ru

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

- Առաքել Դարիժեցի. 1990, Գիրք պատմության, աշխատ.՝ Լ. Խանլարյանի, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 596 էջ:
- Բարխուտարեանց Մ. 1907, Պատմութիւն Աղուանից, հ. Բ, Թիֆլիս, տպ. Ն. Աղանեանցի, 192 էջ:
- Բարխուտարեանց Մ. 1999, Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, Երեւան, «Գանձասար» աստուածաբանական կենտրոն, 415 էջ:
- Դանեղյան Լ. 1969, Շահ-Աբբաս Ա-ի կրոնական հանդուրժողական քաղաքականության հարցի շուրջը. – «Սերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», IV, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 68–92:
- Դիվան հայ վիմագրության. 1982, պր. V, Արցախ, կազմեց Ս. Բարխուդարյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 352 էջ:

Թովիճեան Յ. 1898, Ցուցակ ձեռագրաց Խ. վրդ. Ղաղեանի, մասն Ա, Վաղարշապատ, տպ. Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի, 122 էջ:

Ժամագիրք. 1838, Շուշի, ի տպարանի Բարձր Սրբազան Մետրապօլտի վիճակին Ղարապաղու Տեառն Բաղտասարայ Ասպետափառ Արքեպիսկոպոսին Հասան Ջալալեան, 599 էջ:

Լալայան Ե. 1988, Երկեր, հ. 2, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 505 էջ:

Կարապետյան Մ. 1988, «Իմամ Ջաֆարի» օրենքը և արևելահայերը (XVII–XVIII դարեր). – ՊԲՀ, № 1, էջ 219–221:

Հայաստանի ազգային արխիվ, Խ. վրդ. Ղաղանի ֆոնդ 319, ց. 1, գ. 5, 44, 80:

Հակոբյան Հ. 1932, Ուղեգրություններ, հ. Ա, Երևան, Մելքոնյան ֆոնդի հրատ., 1932, 499 էջ:

Հայերեն ձեռագրերի ժԷ դարի հիշատակարաններ (1601–1620 թթ.). 1974, հ. Ա, կազմեցին Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 827 էջ:

Հովհաննիսյան Ա. 1915, Յակոբ Ջուղայեցու մի գրությունը ռուս արքունիքին. – «Արարատ», № 9–10, էջ 775–781:

Հովհաննիսյան Ա. 1957, Ղրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հ. 1, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 525 էջ:

Մաղալյան Ա. 2008, Աղվանից (Գանձասարի) կաթողիկոսների Գավազանագիրքը. – ՊԲՀ, № 3, էջ 268–271:

Մանր ժամանակագրություններ XIII–XVIII դդ.. 1956, հ. II, կազմ.՝ Վ. Հակոբյան, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 685 էջ:

Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 2561, № 5794, № 9872, № 10157:

Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 1ա, վավ. 25, թղթ. 240, վավ. 132, թղթ. 241, վավ. 199:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ. 1956, պր. I, կազմեց Հ. Փափազյան, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 315 էջ:

Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. հրովարտակներ. 1959, պր. II, կազմեց Հ. Փափազյան, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 593 էջ:

Մելիքսեթ-բեկ Լ. 1936, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, Երևան, Մելքոնյան ֆոնդի հրատ., 168 էջ:

Մելիքսեթ-բեկ Լ. 1955, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Գ, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 345 էջ:

Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի մատենադարան, ձեռ. № 33, թ. 261 ա–բ:

Շահխաթունեանց Յ. 1842, Ստորագրություն կաթողիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հ. 2, Էջմիածին, ի Ս. կաթողիկէ Էջմիածին, 410 էջ:

Պետոյան Ս. 2021, Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալյանցի տպարանում 1837–1840 թթ. հրատարակված գրքերի շուրջ. – «Գրատպությունը Արևելյան Հայաստանում 1828–1920 թվականներին» (հոդվածների ժողովածու), Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, էջ 92–115:

Սիմեոն Երևանցի. 2022, Ջամբռ, աշխատ.՝ Հ. Օհանյանի, Երևան, Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, 463 էջ:

Սմբատեանց Մ. 1896, Նկարագիր Սուրբ Ստեփաննոսի վանաց Սաղիանի եւ միւս վանօրէից եւ ուխտատեղեաց, եւս եւ քաղաքացն եւ գիւղօրէից՝ որք ի Շահախաթոյ թեմի, Տփլիսիս, տպ. Մովսէս Վարդանեանցի, 589 էջ:

Սմբատեանց Մ. 1904, Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ եւ շրջակայից նորա, Տփլիսիս, տպ. Մովսէս Վարդանեանցի, 608 էջ:

Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ վանքի. 1970, հ. Ա, կազմեց Ս. Տէր-Աւետիսեան, Վիեննա, Մխիթարեան տպ., 926 էջ:

Ցուցակ հայերէն ձեռագրաց Ջմնառի վանքի մատենադարանին. 1971, հ. Բ, «Անտոնեան հաւաքածոյ», կազմեցին Հ. Ն. Ակինեան եւ Հ. Հ. Ոսկեան, Վիեննա, Մխիթարեան տպ., 322 էջ:

Ուլուբարյան Բ. 1975, Խաչենի իշխանությունը X–XVI դարերում, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 454 էջ:

Ուլուբարյան Բ. 1979, Ոսկե շրթա, Երևան, «Սովետական գրող» հրատ., 375 էջ:

Ուլուբարյան Բ. 1981, Գանձասար, Երևան, «Հայաստան» հրատ., 168 էջ:

Փափազյան Հ. 1956, Սեֆյան Իրանի ափսիսաւորական քաղաքականության հարցի շուրջը. – «Բանբեր Մատենադարանի», № 3, էջ 85–99:

Армяно-русские отношения в XVII веке. 1953. Сборник документов. Под редакцией В. Парсамяна. Ереван, Изд. АН АрмССР, 287 с.

Бердзенишвили Н., Джавахишвили И., Джанашиа С. 1950, История Грузии, ч. I. Тбилиси, Государственное изд. Грузинской ССР, 459 с.

Иванов М. 1952, Очерк истории Ирана. М., Государственное изд. политической литературы, 467 с.

История Ирана. 1977. М., Изд. Московского университета, 488 с.

Лейн-Пул С. 2020, Мусульманские династии. Хронологические и генеалогические таблицы с историческими введениями. М., «Центрполиграф», 349 с.

Орбели И. 2016, Надписи Гандзасара и ԿАвоцпука. Собрал и подготовил к печати А. Акоюн. Ереван, «Нор тпагрич», 214 с.

Парсадан Горгиджанидзе. 1990, История Грузии. Перевод Р. Кикнадзе и В. Путуридзе. Тбилиси, «Мецниереба», 184 с.

Петрушевский И. 1966, Ислам в Иране в VII–XV веках. Л., Изд. Ленинградского университета, 400 с.

Тбилисская коллекция персидских фирманов. 1989, т. II. Составители: М. Тодуа и И. Шамс. Тбилиси, Изд. Главного архивного управления, 1176 с.

A Man of Two Worlds. Pedros Bedik in Iran 1670–1675. 2014, translated from the Latin and Annotated by Colette Ouahes & Willem Floor. Washington, Mage publishers, 550 p.

Sykes P. 1921, A History of Persia, vol. II. London, Macmillan and Co., 594 p.

К ВОПРОСУ ВЕРООТСТУПНИЧЕСТВА ГРИГОРА АСАН-ДЖАЛАЛЯНА, КАТОЛИКОСА ГАНДЗАСАРА (XVI век)

АРТАК МАГАЛЯН

Резюме

Ключевые слова: Арцах, Гандзасар, Григор Асан-Джалалян, католикос, Гавазанагирк (хронологический список католикосов), ишатакаран (памятная запись), Сефевидский Иран, шах Тахмасп I, насильственное обращение, политика ассимиляции.

В Гавазанагирке (хронологическом списке католиков) Алуанка (Гандзасара) и в различных хрониках упоминается о католике Григоре Асан-Джалаляне, отрешившемся от христианства в XVI веке. Долгое время эта информация оставалась загадкой. Однако после публикации (в 1970 г.) памятной записи Евангелия пера иеромонаха Абраама, хранившегося под номером 33 в библиотеке монастыря Аменапркич Нор Джуги, выяснилось, что католикос Григор в 1574 г. был насильственно обращен в ислам сефевидским шахом Тахмаспом I (1524–1576).

Права католика Григора ранее были утверждены грамотой шаха Тахмаспа I в 1555 году и были переутверждены в 1570 году. Его имя также встречается на хачкаре, установленном в притворе Гандзасарского монастыря в 1563 году, и в памятных записях 1560, 1564, 1569 и 1571 годов. Фактически мы имеем дело со случаем вынужденного вероотступничества человека, занимавшего католикосский престол Гандзасара в течение девятнадцати лет (1555–1574 гг.); при этом, среди армянских католиков он единственный, кто был исламизирован.

Католикос Гандзасара Григор был признан сефевидскими властями законным (легитимным) духовным лидером армян северо-восточной Армении и левобережья Куры. Насильно обратив его в ислам, сефевидский шах косвенно послал сигнал об обращении и членов его верующей паствы.

Ныне в качестве напоминания о католике Григоре остается надпись на хачкаре, возведенном в 1563 году в притворе монастыря Гандзасар в память о его отце Мехраб беке: «По воле Божией я, католикос Григор, воздвиг Святой крест во спасение отца моего», строки которого также относятся к нему.

Артак Магалаян – к. и. н., старший научный сотрудник отдела истории средних веков Института истории НАН РА и отдела средневекового источниковедения Матенадарана им. Маштоца, сотрудник научно-аналитического фонда «Гегард». Научные интересы: история и источниковедение меликств Арцаха и Карабахского ханства, история Ирана эпохи Надир-шаха и армяно-иранские отношения. Автор 5 книг и около 80 статей. ORCID:0009-0001-7687-3460; artak_77@mail.ru

ON THE ISSUE OF GRIGOR HASAN-JALALYAN'S APOSTASY, CATHOLICOS OF GANDZASAR

ARTAK MAGHALYAN

Summary

Keywords: Artsakh, Gandzasar, Grigor Hasan-Jalalyan, Catholicos, Gavazanagirq (chronological list of Catholicoi), Hishatakaran (memorial record), Safavid Iran, Shah Tahmasp I, forced conversion, assimilation policy.

In the Gavazanagirq (chronological list of Catholicoi) from Alwanq (Gandzasar) and in various chronicles, there are references to Catholicos Grigor Hasan-Jalalyan, who renounced Christianity in the 16th century. For a long time, this information remained a mystery. However, after the publication (in 1970) of the memorial records of the Gospel written by hieromonk Abraham, kept under number 33 in the library of the Amenaprkich Monastery of Nor Jugha, it became known that Catholicos Grigor was forcibly converted to Islam in 1574 by Safavid Shah Tahmasp I (1524–1576).

The rights of Catholicos Grigor were previously approved by an edict of Shah Tahmasp I in 1555, and were reaffirmed in 1570. His name is also found on a khachqar (cross-stone) erected in the vestibule of the Gandzasar monastery in 1563, and in the memorial records of 1560, 1564, 1569 and 1571. In fact, we are dealing with a case of a forced apostasy of a man who occupied the Catholicosial seat of Gandzasar for nineteen years (1555–1574); among the Armenian Catholicoi, he was the only one to be converted to Islam.

Catholicos Grigor of Gandzasar was recognized by the Safavid authorities as the legitimate spiritual leader of the Armenians of north-eastern Armenia and the left bank of Kura. By forcefully converting him to Islam, the Safavid Shah indirectly sent a message about conversion to the members of his faithful flock as well.

Presently, as a reminder of Catholicos Grigor, there remains an inscription on the khachqar (cross-stone) erected in 1563 in the vestibule of the Gandzasar monastery in memory of his father Mehrab Bek that reads: “By the will of God, I, Catholicos Grigor, erected the Holy Cross for the salvation of my father”; those lines may also refer to him.

Artak Maghalyan – Candidate of Sciences in History, Senior Researcher of the Institute of History of NAS RA and the Matenadaran after Mashtots, Researcher of the Scientific and Analytical Foundation “Geghard”. Scientific interests: history and source studies, particularly the Melikdoms of Artsakh and the Karabakh Khanate, history of Iran during the era of Nadir-Shah and Armenian-Iranian relations. Author of 5 scientific books and about 80 articles. ORCID:0009-0001-7687-3460; artak_77@mail.ru